ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ**

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE

DEPUTY MINISTER

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Тел./Tel.: 52 66 02, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: miens@edu.am, www.edu.am

N 03/07.2/9360-15 „18" 08 2015թ.

Ինֆորմացիայի ազգային կենտրոնի
նախագահ Շուշան Դոյդոյանին

Հարգելի Շուշան Դոյդոյան

Ի պատասխան Ձեր՝ 10.08.2015թ. N 258-2-ի գրության՝ տեղեկացնում եմ, որ ՀՀ կառավարության՝ 2014 թվականի հուլիսի 31-ի՝ «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության երկրորդ գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին 32 արձանագրային որոշման 9-րդ կետով սահմանված հանձնառությունները սահմանված ժամկետներում կատարվել են:

ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ՝ «Վորլդ Վիժն Հայաստան» բարեգործական կազմակերպության և ՀՀ կրթության և գիտության նախարարության համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցների և «Գորիսի ուսուցիչների միություն» ՀԿ ընդգրկմամբ (հրամանի համարն է՝ 1105-Ա/Ք 17.11.2014թ., կցվում է): Աշխատանքային խմբի հանդիպումները չեն արձանագրվել. խմբի անդամների որոշմամբ քննարկումները կատարվել են հանդիպումների և էլեկտրոնային գրագրության միջոցով:

Աշխատանքային խմբի կողմից լրամշակվել և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015 թվականի փետրվարի 24-ի N 102-Ն հրամանով հաստատվել է «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանում լրացում և փոփոխություններ կատարելու մասին»՝ «Հայաստանի Հանրապետության «Պետական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգը»:

Աշխատանքային խմբի կողմից մշակվել և հաստատման է ներկայացվել նաև «Հանրակրթական ուսումնական հաստատությունների տարեկան բյուջեի պլանավորման և բյուջեի տարեկան ծախսերի հաշվետության կարգը», որը հաստատվել է 2015 թվականի մարտի 30-ի N 205 Ա/Ք հրամանով:

Կից ներկայացնում եմ ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015 թվականի փետրվարի 24-ի՝ «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» N 102-Ն և ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ «Հանրակրթական ուսումնական հաստատությունների տարեկան բյուջեի պլանավորման և բյուջեի տարեկան ծախսերի հաշվետության կարգը» 2015 թվականի մարտի 30-ի N 205 Ա/Ք հրամանները:

«Հայաստանի Հանրապետության «Պետական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգը» և «Հանրակրթական ուսումնական հաստատությունների տարեկան բյուջեի պլանավորման և բյուջեի տարեկան ծախսերի հաշվետության կարգը» տեղադրված են ՀՀ կրթության և գիտության նախարարության edu.am կայքում: «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանում լրացում և փոփոխություններ կատարելու մասին»՝ «Հայաստանի Հանրապետության «Պետական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգը» տեղադրված է նաև Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ՝ arlis.am-ում:

Համապատասխան գրություններ են ուղարկվել Երևանի քաղաքապետարան և ՀՀ մարզպետարաններ՝ ուսումնական հաստատություններում այս կարգերը կիրարկելու համար (գրությունները կցվում են):

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ?????? ???????? Aug 18 2015 5:28 PM +04:00 **ՄԱՆՈՒԿ ՄԿՐՏՉՅԱՆ**

Կատ.՝ Ն.Մնացականյան
հեռ.՝ 524777